



Saints Joachim & Anne
Armenian Apostolic Church

Ս. ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԱՆՆԱ
ՀԱՅՅ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Pastor

Rev. Fr. DIRAN PAPA ZIAN, Archpriest

Տ. ՏԻՐԱՆ ԱՌ. ԲԶՆՅ. ՓԱՓԱՋԵԱՆ, Հովիւ

8 Հոկտեմբեր, 1992

Գեր. Տ. Խաժակ Եղս. Պարսամեան, Առաջնորդ,
Առաջնորդարան Հայոց որ ի նիւ եորը, Ն.Ն.,

Սիրելի Արքայան,

Չեզի ծանօթ է որ մեր ծխական համայնքի պատուական ազգայիններէն՝ Տիար
Կրէկ Արապեան տարիներէ ի վեր փայփայած է իր սրտին շատ մօտիկ երազ մը,
այն է՝ օժտուած տեսնել մեր եկեղեցին մարմարապետ Հայկական ոճով շինուած
մայր խորանով մը՝ հանդերձ Սարիամ Աստուածածնայ Յիսուս Սանուկը գրկին
աւանդական սրբանկարով մը, ինչպէս նաեւ կողմնակի գոյգ փոքր խորանները
հանդերձ պատշաճ սրբանկարներով:

Պրն. Արապեան յամառօրէն եւ անհատ շարունակած է կառչած մնալ իր այս
երազին եւ ոչինչ խնայած է իր այս երազին մարմին տալու ճամբուն վրայ:
Եւ առ այդ անհկա ֆոնտ մը հաստատած է եկեղեցւոյս անունով, որ աճած է
պատկառելի չափով: Սիջանկեալ աւելցնենք նաեւ որ սրբանկարներու գործը
յանձնուած է արդէն իսկ ֆլորիտաքնակ համբաւաւոր նկարիչի մը որ յառաջ
կը տանի իր արուեստի գործը կարելի բժախնդրութեամբ:

Պրն. Արապեան վերջերս մեզի տեղեկացուց որ խորաններու շինութեան
գործը յառաջ կ'ընթանայ մեծաքայլ, Բլիվլենտաքնակ Հայ Ճարտարապետի մը
հսկողութեան ներքեւ, աշխատանքները կ'աւարտին շուտով եւ խորանները կը
գետեղուին իրենց տեղերը:

Արդ, խորաններու օժման համար թուական մը որոշելու հարց մը մէջտեղ
ելաւ: Պրն. Արապեան խնդրած է մեզմէ որ՝ նկատի առնելով իր իւրայատուկ
պարագաները՝ օժումը կատարուի յառաջիկայ գարնան: Մայիսը խոնոզուած ըլ-
լալով՝ առաջին պատեհ թուականը կը թուի ըլլալ 6 Յունիս, 1993: Եթէ ձեզի
ալ յարմար է այս թուականը եւ կամ անյարմար, գոյգ պարագաներուն ալ՝
կրնայի՞՞՞ ձեզմէ խնդրել որ մեզի տեղեկացնէիք առաջին պատեհութեամբ,
որպէս զի վերջնականապէս ճշդէինք թուականը:

Խոնարհ Աղօթակից՝

Տ.Տիրան Ա.Բ.Յ.Յ. Փափագեան

OK